Քննարկվել է մանկավարժական խորհրդի
«..31..»........08........ 20..22...թ. թիվ
......01... նիստում

Տնօրեն՝ Ք. Միարոնյան

Հաստատվել է կառավարման Խորհրդի «
..31..»........08........ 20..22....թ. թիվ
....06... նիստում

Նախագահ՝ Ա. Եսայան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների հարցման

Գյումրի 2022

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների հարցման (այսուհետև՝ ուսանողների և շրջանավարտների հարցման) կանոնակարգը սահմանում է Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «այսուհետև՝ Ուսումնարան» ուսանողների կողմից վարչական, դասավանդող կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:

1.2. Ուսանողների և շրջանավարտների հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի և ուսումնարանի պահանջների համաձայն և համարվում է ուսումնարանի ուսանողների որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և դասավանդող կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.3 Ուսանողների և շրջանավարտների հարցման կանոնակարգը հաստատում և փոփոխություններ ու լրացումներ կատարում է ուսումնարանի կառավարման խորհուրդը:

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

2.1. Ուսանողների և շրջանավարտների հարցումն իրականացվում է առկա կամ առցանց եղանակով երկրորդ կիսամյակի ընթացքում՝ ապրիլ- մայիս ամիսներին:

2.2. Հարցմանն ուսանողը կարող է մասնակցել նաև ցանկացած վայրից՝ օգտվելով ուսանողների հարցումների համար նախատեսված վիրտուալ տիրույթից:

2.3. Ուսանողների հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (հավելված 1), և շրջանավարտի գնահատման հարցաթերթով (հավելված 2), որում ուսանողը, 1-5 միավորանոց գնահատման սանդղակով և նախընտրած տարբերակներից մեկն ընտրելով պատասխանում է առաջադրված հարցերին:
Հավելված 1 և հավելված 2 –ը ենթակա են փոփոխությունների և լրացումների:

2.4. Հարցաթերթի ձևանմուշն ունի նաև տեղեկատվության հատված, որի հարցերը յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում են տնօրենի կողմից:

2.5. Հարցումը կազմակերպում և վերահսկում են տնօրենը, կազմակերպադաստիարակչական գծով տնօրենի տեղակալը և տնօրենի օգնականը:

2.6. Ուսանողները և շրջանավարտները հարցաթերթի՝ կարծիքների և առաջարկների համար հատկացված հատվածում կարող են նաև ներկայացնել դասավանդման որակի և ուսումնական գործընթացի բարելավմանը միտված իրենց բողոքներն ու առաջարկները:

Ուսանողները և շրջանավարտները կարող են կարծիքներ ներկայացնել յուրաքանչյուր դասավանդողի աշխատանքի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 3. Ուսանողների հարցման արդյունքների օգտագործումը

3.1.Ուսանողների և շրջանավարտների հարցման արդյունքները մշակվում են:

3.2 Հարցման արդյունքները քննարկվում են մեթոդական միավորումների, մանկավարժական և կառավարման խորհրդի նիստերում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասավանդողի դասավանդման որակի բարելավմանը:

3.3. Հարցման արդյունքները ուստարվա վերջում ամփոփված ներկայացվում են Ուսումնարանի կառավարման խորհրդում:

3.4. Դասավանդողն իրավունք ունի մեթոդական միավորման նախագահից ստանալու իրեն վերաբերող գնահատականներն ու կարծիքները և ծանոթանալու դրանց:

3.5. Ուսանողական և շրջանավարտների հարցման արդյունքներն օգտագործվում են՝

- Դասավանդողների ինքնավերլուծության իրականացմանը և նրանց կողմից դասավանդման մոտեցումների և կիրառվող մեթոդների շարունակական բարելավմանը աջակցելու նպատակով:
- Դասավանդողի պաշտոնակալման, առաջխաղացման և խրախուսման նպատակով:
- Դասավանդողներին լրավճարներ հատկացնելու նպատակով:

3.6 Հարցման արդյունքներն օգտագործվում են միայն ամփոփ տեսքով, իսկ անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է:

Հավելված 1

1.	Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը ուսումնարանի վարչական կազմի վերաբերյալ
2.	Արդյո՞ք ճիշտ եք համարու՞մ Ձեր մասնագիտության ընտրությունը
3.	Գնահատե՛ք Ձեր ստացած պրակտիկ գիտելիքները
4.	Գնահատեք Ձեր ստացած տեսական գիտելիքները
5.	Գնահատե՛ք ուսումնարանի տեխնիկական հագեցվածությունը և լսարանների հարմարավետությունը
6.	Գնահատե՛ք ուսումնական գործընթացի կազմակերպչական աշխատանքները
ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՆՇԵԼ, ԹԵ ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ ՆՇՅԱԼ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՊՆԴՈՒՄՆԵՐԻՆ	
1.	Դասընթացի նյութը մատուցում է պարզ և հասկանալի
2.	Դասընթացն ապահովում է անհրաժեշտ ուսումնական և մեթոդական նյութերով
3.	Նպաստում է ուսանողների մասնակցությանը և ներգրավվածությանը
4.	Խթանում է ուսանողի վերլուծական և քննադատական մտածողությանը

5.	Ուսանողների գիտելիքները գնահատում է օբյեկտիվորեն
6.	Չի բացակայում և չի ուշանում դասերից
7.	Լսարանում ապահովում է պատշաճ կարգապահություն
8.	Լսարանում ժամանակն օգտագործում է արդյունավետ
9.	Դասընթացին վերաբերող հարցեր քննարկելու համար ժամանակ է տրամադրում նաև լսարանից դուրս
10.	Բարյացակամ և հարգալից է ուսանողների նկատմամբ
11.	Որքանո՞վ է դասընթացն օգտակար Ձեզ համար
12.	Կցանկայի՞ք մասնակցել տվյալ դասախոսի կողմից դասավանդվող մեկ այլ դասընթացի

Հավելված 2

ՀՀ ԿԳՄՄՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ և ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՀԱՐՑՈՒՄ	
1.	Նշե՛ք Ձեր սովորած մասնագիտությունը
2.	Պատրաստվու՞մ եք արդյոք շարունակել ուսումը (այո, ոչ)
3.	Որքանո՞վ Ձեր ուսումնառությունը նպաստեց մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը (գնահատել 0-5)
4.	Ինչպե՞ս եք գնահատում օտար լեզուներից ստացած Ձեր գիտելիքները(գնահատել 0-5)
5.	Որքա՞ն եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը(գնահատել 0-5)
6.	Արդյո՞ք Ձեր գիտելիքները ուսումնառության տարիներին օբյեկտիվորեն են գնահատվել (այո, ոչ)
7.	Ինչպե՞ս եք գնահատում լսարանների վիճակը, կահավորանքը(գնահատել 0-5)
8.	Որքանո՞վ էր արդյունավետ Կարիերայի կենտրոնի կատարած աշխատանքները (գնահատել 0-5)
9.	Որքանո՞վ եք գոհ գրադարանում առկա մասնագիտական և գեղարվեստական գրականությունից (գնահատել 0-5)
10.	Արդյո՞ք գոհ եք ուսումնարանի ղեկավարությունից (այո, ոչ)
11.	Արդյո՞ք գոհ եք դասախոսական կազմից (այո, ոչ)
12.	Որքանո՞վ էր արդյունավետ ուսանողական և ծնողական խորհուրդների կատարած աշխատանքները (գնահատել 0-5)
13.	Արդյո՞ք մասնագիտական արհեստանոցները համապատասխանում են լիարժեք գործնական պարապմունքների իրականացման համար: (այո, ոչ)
14.	Արդյո՞ք ընդհանուր առմամբ գոհ եք Ձեր ստացած կրթությունից (այո, ոչ)
15.	Խորհուրդ կտա՞ք այլ անձանց կրթություն ստանալ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում